

Վ. ՏԵՐՅԱՆԻ ԱՆՉԱՅՏ ՈՒ ԱՆՏԻՊ ՉՈՂՎԱԾՆԵՐԸ

Վահան Տերյանի հրապարակախոսության մեջ կան նմուշներ, որոնք չեն հրատարակվել կամ հրատարակվել են ոչ որպես հոդվածներ: Հրատարակիչների անփութության արդյունքում Վ. Տերյանի ստեղծագործությունների հրատարակություններից դուրս են մնացել «Իմ բացատրությունը» և «Сухумская ловушка» հոդվածները:

ա. «Իմ բացատրությունը»

Մինչ բուն հոդվածին անդրադառնալը՝ անհրաժեշտ է նշել այն շարժառիթները և նախապատմությունը, որոնք դրդեցին Վահան Տերյանին գրելու այս հոդվածը:

1914թ. հունվարի 26-ին «Հորիզոն» պարբերականում հրապարակվում է մի հեռագիր, որը ստորագրված էր երեք ընկերների կողմից՝ Վահան Տերյանի, Յուլակ Խանգադյանի (Գրասեր) և Պողոս Մակինցյանի: Հեռագրով ընկերներն իրենց բողոքն էին արտահայտում Հովհաննես Թումանյանի դեմ գրված և «Մշակ»-ում տպագրված հոդվածներին:

«Ճիշտ չէ, թե հասարակությունն անտարբեր է գտնվել հայ երկրի մեծ գրողին հասցրած անլուր վիրավորանքների հանդեպ: Համակրական հեռագիրները մեզնում չեն արտահայտում հասարակաց կարծիքը: Ամենալավ բողոքը լռությունն է: Թող հայտնի լինի, որ հայ ժողովուրդը հավիտյանս պարտական պիտի մնա Թումանյանին: Ոչ մի հայիոյանք չպիտի կարողանա մթազնել մեր գրականության կարմիր արևը. նա կփայլի, քանի կենդանի է մեր ժողովուրդը և սրա մահից հետո ևս, ինչպես ացտեկների բանաստեղծ ոմն Տեոցկոյոտլ, որը ապրում է ցարդ, թեև վաղուց բնաջնջվել է նրա ժողովուրդը: Այդպես ահա, ժամանակը կծաղրի մեր մամուլի անարգ Թերսիդեսին»¹:

Հեռագրի հրապարակումից հետո «Մշակ»-ի խմբագիր Հարություն Առաքելյանը, իմանալով, որ Հ.Սուրխաթյանի նամակին ի պատասխան

¹ Տերյան Վ., երկերի ժողովածու, հ. 4, եր., 1979, էջ 146:

Վ. Տերյանը գրել է. «Ոչ մի հողված չեմ գրել. Անշուշտ մի թյուրիմացություն է տեղի ունեցել, կաշխատեմ պարզել», հունվարի 30-ին հրապարակում է մի հողված, որտեղ կասկած է հայտնում, թե ինչպես կարող էր Վ. Տերյանը «Մշակ»-ի դեմ հողված տպել, եթե նախ ինքը այդ ժամանակ չի եղել Բաքվում, ապա մի քանի օր առաջ՝ հունվարի 12-ին էլ «Մշակ»-ի հետ բանաստեղծը եկել է համաձայնության, որ պետք է թղթակցի պարբերականին, հետևաբար, ըստ Յ. Առաքելյանի, Վահան Տերյանի ստորագրությունը կեղծված է:

Ըստ երևույթին՝ հասկանալով ու տեղեկանալով, թե ինչ է կատարվում, Վ. Տերյանը Յ. Առաքելյանի հողվածի տպագրությունից մեկ օր առաջ՝ հունվարի 29-ին, հեռագիր է ուղարկում «Մշակ»-ի խմբագրությանը հետևյալ բովանդակությամբ.

«Ամենևին չհամակրելով «Հորիզոն»-ին, բացասաբար վերաբերվելով այդ լրագրի ընդհանուր ուղղությանը, գերադասելով «Մշակ»-ը, որին համաձայնություն էի տվել աշխատակցելու,՝ այնուամենայնիվ, այսօր միայն ծանոթանալով Թումանյանի դեմ ուղղված հողվածներին, անկեղծորեն վշտացած եմ: Չեմ կարող ծածկել զայրույթս և չբողոքել այդպիսի քայլերի դեմ, որոնք միանգամայն անթույլատրելի են գրական էթիկայի տեսակետից;

Կատարելապես հասկանալով իմ բարեկամներին՝ Մակինցյանին և Խանզադյանին, որոնք իմ ստորագրությունը կցել են իրենց բողոքին, լիովին արդարացնելով նրանց, մանավանդ որ բողոքը հրատարակելուց առաջ նրանց կողմից ինձ ուղարկված հեռագիրը անհասկանալի էր մնացել ինձ համար՝ գործի էությանը անծանոթ լինելու պատճառով՝ ամենախորին համակրանքս եմ հայտնում մեծարելի բանաստեղծ Թումանյանին:

«Մշակ»-ին աշխատակցելուս խնդիրը վերանում է»¹:

«Մշակ»-ում այս հեռագիրը հրատարակելուն զուգահեռ Յ. Առաքելյանը նոր հողված է տպագրում (հունվարի 31), որով կասկած է հայտնում, թե իրոք Տերյանը ընկերների կողմից հեռագիր է ստացած եղել:

Սրան էլ ի պատասխան Վահան Տերյանը գրում է ««Մշակ»-ի հարգո խմբագրության իմ բացատրությունը», որը, ենթադրվում է, որ պետք է հրապարակվեր, սակայն Յ. Առաքելյանն այլևս չի շարունակում վեճը և չի էլ հրապարակում Վ. Տերյանի գրածը:

Ասվածից պարզ է դառնում, որ Վահան Տերյանը «Իմ բացատրությունը» գրել է որպես հողված, սակայն Վ. Պարտիզունին իր խմբա-

¹ Նույն տեղում, էջ 147:

գրած և՛ երեքհատորյակում, և՛ չորսհատորյակում այս հոդվածը տպագրել է որպես նամակ: Ավելին՝ «Հայագիտակ» հրատարակչությունը, 2005թ. տպագրելով Վ. Տերյանի հնարավորինս ամբողջական մեկհատորյակը, կրկնել է Վ. Պարտիզունու սխալը և այս հոդվածը տպագրել է որպես նամակ¹:

Որպես հոդված՝ «Իմ բացատրությունը» հրատարակվել է միայն բանաստեղծի աղջկա՝ Նվարդ Տերյանի կազմած և ծանոթագրած «Ваш Терьян. Критика и публицистика» գրքում (1985), բայց քանի որ գիրքը տպագրվել է ռուսերեն, Ն. Տերյանի անժամանակ մահվանից հետո, ոչ միայն հասարակությանը, այլև գրականագետներին այն, ցավոք, քիչ է հայտնի:

«Իմ բացատրությունը» Վահան Տերյանի հոդվածներում առանձնանում է իր ոճով ու տրամաբանությամբ. միայն այն հանգամանքը, որ Վ. Տերյանին վարկաբեկել փորձող պարբերականը Տերյանի ուղարկած հեռագիրը և իր հերթական պատասխանը տպագրելուց հետո չի հրատարակում այս հոդվածը և ավելին՝ ավարտում է բանավեճը, ցույց է տալիս, թե հրապարակախոսի ինչքան սուր գրիչ ուներ բանաստեղծը: Բացի դրանից՝ հոդվածի միջոցով ընդգծվում են Վահան Տերյանի աշխարհայացքային մի շարք առանձնահատկությունները:

Նախ Վ. Տերյանն անդրադառնում է հայկական մամուլում անձնական բնույթի խնդիրներ տպագրելու «վատ սովորությանը»՝ նշելով, որ մյուս կողմից էլ հրապարակային բանավեճից ավելի անշնորհակալ ոչինչ չկա.

«Որքան և ազնիվ ու մաքուր դրդապատճառներ լինեն ձեզ ստիպողը, որքան և սկզբունքի խնդիրները լինեն ձեզ ղեկավարողը՝ քանի որ դուք յանուն այդ սկզբունքի դուրս եք գալիս որևէ անձի դեմ, դուք ենթարկած եք ամեն տեսակ անակնկալ վիրավորանքի և անաճարկութան, որովհետև այն անձը որի դեմ դուք համարձակվել եք դուրս գալու ունի իր փողրիկ սնափառութիւնն ու ինքնասիրութիւնը, որ նա ամեն սկզբունքից ու գաղափարից բարձր է դասում: Եվ բաւական է, որ դուք դուրս գաք այս կամ այն անձի դեմ (սոսկ իբր այս կամ այն գաղափարի քարոզչի դեմ, ոչ անել հեռու լինելով միանգամայն նեղ անձնական նկատումներից) և դուք արդեն թշնամի եք և ձեզ տապալելու, ձեզ վարկաբեկելու համար ամեն միջոց ու ձև թույլատրելի է համարում»²:

Փաստորեն Վ. Տերյանը նախ արձանագրում է, որ հայ իրականության մեջ բանավիճելու ոչ մի կոլտուրա չկա, փոխարենը յուրաքանչյուր քննա-

¹ Տես Տերյան Վ., Ընտրանի, Եր., 2005, էջ 673:

² ԳԱԹ, Վահան Տերյանի ֆոնդ, N 105:

դատություն արագորեն անձնականացվում է և դառնում անձնական թշնամության առիթ: Սա արդեն փչացնում է բոլոր հեռանկարները:

Ապա Վ. Տերյանը հռետորական մի բացառիկ հնար է կիրառում, որի իրական նպատակն ընդդիմախոսին լռեցնելն է: Տերյանը գրում է, որ մոտ մեկ ամիս առաջ մի «խիստ ոճով» հոդված է գրել և երկար ժամանակ մտածել է, թե որ խմբագրությանը կարելի է այն ուղարկել: Ապա պոետի մտերիմներից մեկը, ով աշխատակցում է «Մշակ»-ին, վստահեցրել է, որ հենց այս պարբերականը կտպագրի այդ «խիստ ոճով» հոդվածը¹: Սակայն աշխատակցելու բանակցությունները, ապա վերոնշյալ հեռագրի պատմությունը թույլ չեն տալիս բանաստեղծին «Մշակ»-ին ուղարկել արդեն գրված հոդվածը: Այսինքն՝ նախ Տերյանը նշում է, որ իր կարծիքով, ամենահամարձակ ու սկզբունքային, ինչպես նաև աշխարհայացքային առումով իրեն ամենից մոտ պարբերականը հենց «Մշակ»-ն է: Ապա նշելով, որ իր ընկերների բողոքը «կուսակցական» կամ «խնամիական» ոչ մի դրդապատճառ չի ունեցել, անցնում է բուն նյութին:

Վ. Տերյանը նախ անդրադառնում է Ծիրվանզադեի՝ Գյոթեի մասին գրված քննադատական հոդվածին՝ նշելով, որ իր համար սկզբունքորեն կարևոր է այն, որ յուրաքանչյուր մարդու կարելի է քննադատել, սակայն անընդունելի է, երբ այդ քննադատությունը «համեմվում է» անձնական վիրավորանքներով: Վ. Տերյանը մեջ է բերում ոմն Ճերմակի պատասխանը Ծիրվանզադեի հոդվածին, որը վերնագրված է եղել «Գրաֆոմանի գրչի տակ» և տպագրվել է «Հորիզոն»-ում: Պոետը նշում է, որ արդեն վերնագրում Ծիրվանզադեն համարվում է «գրաֆոման»: Նույնիսկ դա ընդունելի համարելով՝ Վ. Տերյանը գրում է իր հիմնական մտահոգության մասին.

«Այստեղ ևս չըմոռանանք սակայն որ կարծիքի ազատութեան իրաւունքը – սուրբ իրաւունք է: Թող Ճերմակը այդպէս կարծէ – մեղք չըկայ դրանում: Բայց պ. Ճերմակի յօդածը տպել է մի թերթ, որը դեռ մի տարի առաջ մի ամբողջ տարի ագիտացիա էր մղում և պրօպագանտ էր անում այդ նոյն Ծիրանզադէի յօբելեանի վերաբերմամբ: Արդեօք այդ վերջին հանգամանքը որոշ պարտականութիւն չէ՞ր դնում յիշեալ թերթի խմբագրութեան վրայ: Արդեօք թոյլատրելի՞ է, որ մի հասարակական օրգան այսօր երկինք բարձրացնէ մի հեղինակի, տօնէ ամենայն շքեղութեամբ նրա գործունեութեան, բեղմնատուր գործունեութեան յօբե-

¹ Ըստ էդ. Զրբաշյանի՝ այստեղ Տերյանը նկատի է ունեցել «Ինքնակոչ փրկիչներ» հոդվածը:

լեանը և դեռ «հողաթափներ չըմաշած» նոյն այդ հեղինակին գրաֆոման (այսինքն գրելու մանեայով, գրելացատվ բռնած մէկը) անանէ»¹:

Այստեղ Վ. Տերյանը նոր որակի մամուլի խնդիր է բարձրացնում. եթե նույնիսկ ինչ-որ մեկը կարող է Շիրվանզադէին «գրաֆոման» համարել, ապա չի կարող պարբերականը, որը ոչ հեռու անցյալում գովերգում և երկրպագում էր արծակագրին, համակարծիք լինելով անձնական վիրավորանքներով լի հողվածի հետ՝ տպագրի այն: Վ. Տերյանը բարձրաձայնում է հասարակական պատասխանատվության մասին, ըստ որի՝ խմբագրությունը՝ որպէս հասարակական ազդեցություն ունեցող մարմին, պարտավոր է ունենալ ինչ-ինչ սկզբունքներ և գոնե փորձել պահպանել դրանք:

«Արդեօք «Յորիզունի» ասածները բարոյական պատասխանատւութիւն դնո՞ւմ են խմբագրութեան վրայ (արդէն մի կողմ թողած տրամաբանական պատասխանատւութեան հարցը), թէ՞, քամու բերածի նըման է այդ լրագրի ասածը - այսօր այսպէս, վաղը այլ կերպ... Չէ՞ որ Շիրվանզադէն նոյն Շիրվանզադէն էր, որին նկրած էին (չըհաշած ամբողջ տարւայ ընթացքում գրած անթիւ յօդածները) «Յորիզուն»-ի երկու օրւայ (եթէ ոչ աւել) համարները ամբողջապէս լի ամենաջերմ ողջոյններով ու գովեստներով: Եվ հանկարծ նոյն գրողը գրաֆոման...»²:

Փաստորեն, նպատակ ունենալով պատասխանել Յ. Առաքելյանի՝ իրեն ուղղված մեղադրանքին՝ Վ. Տերյանն անդրադառնում է այն ժամանակվա հայկական մամուլի վերաբերյալ իր ունեցած դիտողություններին, որոնք ուղղում է ոչ թե իրեն մեղադրող «Մշակ»-ի, այլ այդ կոնկրետ իրավիճակում իրեն պաշտպանող «Յորիզուն»-ի դեմ՝ դրանով ցույց տալով իր անաչառությունը և այն, որ մամուլը պետք է զերծ լինի մեղ-անձնական հավակնություններից՝ անդրադառնալով միայն հասարակության համար սկզբունքային-արժեհամակարգային խնդիրների: Եթե ասվածին հավելենք այն, որ Վ. Տերյանի նամակների հրատարակություններից կրճատված, բայց այս աշխատանքի առաջին գլխում տպագրված նամակներից երևում է, թե ինչքան վատ կարծիք ուներ Վ. Տերյանը Շիրվանզադէի՝ որպէս մարդու նկատմամբ, սակայն հասարակական հարթակներում միշտ վեր էր կանգնում իր անձնական կարծիքից և մշտապես բարձր գնահատում գրողի դերը հատկապէս հայոց լեզվի զարգացման հարցում, իսկ այս հողվածում՝ քննադատելու իրավունքը, ապա ավելի ակնառու են դառնում Վահան Տերյանի սկզբունքայնությունն ու ազնվությունը:

Վ. Տերյանը քննադատության սլաքն ուղղում է նաև հայ հասարա-

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում:

կության դեմ, որի լուռ թողտվութամբ է միայն, որ հայկական մամուլը կարողանում է նման ոչ-սկզբունքայնություն դրսևորել.

«Ահա այս փաստի դեմ ես ուզում էի բողոքել ամենաեռանդուն ու վճռական կերպով, որովհետև թե այդ յօդածը, թե այն նկատողութիւնը («Հորիզոն»-ի նոր տարւայ N-ում) որ նկրած է Ծիրվանգաղէին ցոյց են տալիս որ յիշեալ խմբագրութիւնը, յամենայն դեպս գոնէ այդ խմբագրութիւնը իրատւոյն չունի ասելու որ հայ հասարակութիւնը պիտի բողոքէ և չի բողոքում քանի որ հայ հասարակութիւնը եթէ բողոքող լինէր նախ պիտի նոյն խմբագրութեան դէմ բողոքէր: Եվ հասարակութիւնը պիտի բողոքէր ոչ միայն ձևի դէմ այլ և էութեան: Այսինքն ոչ միայն այն բանի դէմ, որ նրանք իրանց իսկ դրատած և իրանց ձեռքով պսակած հայ հեղինակին ամենաանպատկառ կերպով վարկաբեկ են անում անվայել արտայայտութեամբ, ձևով, այլ և նրանց ընդհանուր վերաբերմունքի դէմ դէպի իրերը»¹:

Անվաճով Վ. Տերյանը խիստ քննադատության է ենթարկում ընդհանրապես հայ հասարակությանը, որը ոչ միայն չի կարողանում ձևարտաքինի՝ ինչպես-ի ընդունելիի և անընդունելիի սահմանազատում կատարել, այլև նույնիսկ չի սահմանազատում բովանդակային առումով անընդունելի՝ անսկզբունքայնությունը և անպատասխանատվությունը: Ահա այս համատեքստում է, որ Վ. Տերյանը նույնիսկ չի էլ զարմանում, որ հայագետ Նիկողայոս Մառի վերաբերյալ հայկական մամուլում կարող էր «անվայել ակնարկ» լինել.

«Նոյնպիսի մի անվայել ակնարկ թոյլ էր տուել նոյն թերթի խմբագրութիւնը իր աշխատակիցներից մի ուրիշին պրօֆ. Մառի վերաբերմամբ, այն Մառի, որի արժանիքներն ու բարեմասնութիւնները ես չեմ որ պիտի մատնանշեմ - նոքա շատ լաւ յայտնի են հայ հասարակութեան - բայց կուզէի միայն նկատել որ այդ անվայել ակնարկը արած է այն ժամանակ, երբ Մառի յօբելեանն էր, որին այնքան անտարբեր ու սառը վերաբերեց հայ հասարակութիւնը, գուցէ նոյն պարոնների և այլոց տարածած անարժան բամբասանքների շնորհիւ»²:

Բայց Վ. Տերյանի հողվածը գուցեև տպագրեր Հ. Առաքելյանը, եթե չլիներ նրա վերջին հատվածը, որտեղ հեղինակը ցոյց է տալիս իր և «Մշակ»-ի խմբագրության միջև եղած արժեհամակարգային տարբերությունը, ինչից էլ, ըստ էության, «հանձնվել» է Հ. Առաքելյանը և եզրափակել բանավեճը՝ Վ. Տերյանի պատասխանը չտպագրելու փաստով ցոյց տալով, որ ընդունում է պոետի իրավացիությունը:

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում:

Վեր կանգնելով իր դեմ տպագրված բացասական կարծիքների թողած անձնական զգացողություններից՝ Վահան Տերյանը հողվածի վերջում նորից է անդրադառնում հողվածի բուն շարժառիթին՝ «Մշակ»-ի՝ Հովի. Թումանյանին քննադատող հողվածին և Ցոլակ Խանգադյանի ու Պողոս Մակինցյանի՝ «Հորիզոն»-ում տպագրած պատասխանին՝ նշելով, որ որքան էլ ինքը բարձր է գնահատում Թումանյանին և Հ. Առաքելյանի կարծիքը համարում է անընդունելի, այդուհանդերձ Հ. Առաքելյանի սկզբունքային դիրքորոշումն իր համար շատ ավելի ընդունելի է, քան «Հորիզոն»-ի ոչ-սկզբունքային պաշտպանությունը Հովի. Թումանյանին:

«Արդ, երբ ես պարզ կերպով յայտնել եմ իմ վերաբերմունքը դէպի պ. Առաքելյանի յօդածը Հով. Թումանեանի մասին ես կուզէի մի քանի խօսք ևս ասել: Որքան և անթույլատրելի համարեմ Առաքելյանի յօդածները մի բան մնում է անժխտելի - «Մշակը» որքան ինձ յայտնի է և մասնատրապէս պ. Առաքելեանը երբէք չեն փառաբանել Հով. Թումանեանին - նրանք միշտ բացասական վերաբերմունք են ցոյց տուել դէպի Թումանեանը: Գուցէ սխալ է նրանց կարծիքը (ես կարծում եմ որ այո՛, սխալ է) բայց մարդիկ այդպէս են կարծում և այդպէս էլ ասում են: Իսկ երբ «Հորիզոնն» է ասում Թումանեանի մասին, որ նա մեծ պօէտ է ես ոչ մի րոպէ նրան հաւատալ չեմ կարողանում, որովհետև փորձը ցոյց է տալիս, որ վաղը «առանց որևէ պատճառի» (կամ աւելի ճիշտ ինձ անյայտ պատճառներով) նոյն մեծ պօէտին նոյն Հորիզոնը կարող է գրաֆուման, կամ մի այլ նոյնանման եթէ ոչ վատթար պատւանդուն տալ»¹:

Հողվածի վերջնամասում տեսնում ենք հայ իրականության մեջ աննախադեպ մի երևույթ, որը կարող էր անել միայն Գրի վարպետը. այսքան բարձր գովեստ և գնահատական՝ առաջին հայացքից, բայց իրականում իր և խմբագրության, այսինքն՝ Հ. Առաքելյանի արժեհամակարգային տարբերությունների այնքան պարզ ցուցադրություն, որը «Մշակ»-ի գլխավոր խմբագիրը, ինքն իրեն խնայելով, չի տպագրել: Իսկ տերյանագիտությունը, այդ փաստը հաշվի չառնելով, «Իմ բացատրությունը» համարել է նամակ Հ. Առաքելյանին:

բ. «Сухумская ловушка»

Հանցավոր անփութության արդյունքում Վահան Տերյանի չտպագրված գրվածքներից է «Сухумская ловушка»-ն, որի ձեռագիրը պահվում է Գրականության և արվեստի թանգարանի Վահան Տերյանի ֆոնդում:

¹ Նույն տեղում:

Պոետի հիմնական հրատարակիչները՝ Ա՝ Պ. Մակինցյանը, Ա՝ Վ. Պարտիզունին, իրենց գրած մեկնաբանություններում նշում են, որ ծանոթ են Վահան Տերյանի այս ձեռագրին, սակայն չգիտես ինչու այն համարել են «ոչ արժանի գրոյ յիշատակին»։ Սրա հիմնական պատճառը, ըստ երևույթին, այն է, որ Սուխումիի առողջարանում կատարված դեպքերը բազմաթիվ շահարկումների առիթ են դարձել, ըստ որոնց՝ թոքախտավորների մեջ Վահան Տերյանը փորձել է բուշկիկյան քարոզչություն իրականացնել, ինչը հանգեցրել է առողջարանի տնօրենության հակազդեցությանը և ի վերջո, նաև բախմանը։ Պողոս Մակինցյանը գրում է.

«...Նա պետք է վերջացներ իր հաշիվները զինվորագրության հետ, որպեսզի ապա ուղևորվեր Սուխում՝ բուժարան...

... Կարծես պոետը նախազգում էր, որ ո՛չ բուժարանը, ո՛չ խնամքը հայրենի գյուղում նրան չեն փրկի։ Այսպիսի հոգեկան վիճակում նա 1917 թվի սկզբում ուղևորվեց Թիֆլիս և ապա՝ Սուխում։

Մեծ հեղափոխության սկզբում Սուխումի բուժարանում տեղի է ունենում հիվանդների դժգոհության հետևանքով մի բունթ, որի ղեկավարն է հանդիսանում Վ. Տերյանը։ Պոետի թղթերում մնացել է մի թղթակցություն «Сухумская ловушка» վերնագրով, անավարտ մի հոդված այդ բուժարանի մասին, որ հետագա գլուխ պատասցնող անցուդարձի շնորհիվ մատնվել է անուշադրության ու մոռացության։ Այսպես թե այնպես, հազիվ մի երկու շաբաթ ապրելուց հետո, Տերյանը վերադառնում է Թիֆլիս և այդտեղից անցնում հայրենիք - Գանձա գյուղը։ Սակայն եթե բուժարանում նա չկարողացավ պահել իրեն որպես հիվանդ, ավելի ևս հիվանդի դրությունն անտանելի է դառնում նրա համար հայրենիքում, հեղափոխական օրերի սկզբնական արբեցումի շրջանում։ Նա հանդես է գալիս որպես պրոպագանդիստ, դասախոսում է Ախալքալաքում քաղաքական խնդիրների մասին և, եթե աչքի առաջ ունենանք նրա բուշկիկ լինելը - իսկույն ինքնին ըմբռնելի կդառնա, թե ինչ պայմաններ են ստեղծվում հիվանդի համար»¹։

Թեև Մակինցյանը ուղղակիորեն չի նկարագրում իր ասած «բունթը», բայց փաստերը կեղծելով (Վ. Տերյանը այդ ժամանակահատվածում՝ 1917 թ. սկզբին, բուշկիկ չէր, Մակինցյանը կեղծում է նաև տևողությունը՝ երկու շաբաթ)՝ ակնարկում է, թե կոնֆլիկտի հիմքը եղել է հեղափոխությունը։ Մակինցյանի այս «հուշմանն» արձագանքել է Ս.Ալիխանյանը՝ «Վահան Տերյանի պետական գործունեությունը» գրքում առողջարանում տեղի ունեցածը ձևակերպելով որպես «ռևոլյուցիոն գործունեության սկիզբ», ավելին՝ «...Ցարական կառավարության դեմ, թալանչիական

¹ Տերյան Վ., Յերկերի ժողովածու, Պոլիս, հ. 1, 1924, էջ XLII:

պատերազմի դեմ ուղղված վիրավոր ու հիվանդ զինվորների մի ելույթ ... որը ոգեշնչել և ղեկավարել է Տերյանը»¹:

Մեջքերումներից պարզ է դառնում, թե ինչու էր այս հողվածը խորհրդային տարիներին մնացել անտիպ:

Իսկ իրականում «Сухумская ловушка»-ն Վահան Տերյանի բողոքն է՝ առողջարանում բուժվող բոլոր հիվանդների անունից գրված, որով թոքախտով արդեն հիվանդ պոետը բացահայտում է առողջարանում առկա անմարդկային պայմանները՝ հիմնականում վատ ու քիչ սնունդը:

Թե կոնկրետ որ օրն է Սուխումի մեկնել Վ. Տերյանը, հայտնի չէ: Հայտնի է, որ փետրվարի 11-ի նամակում պոետը գրում է, որ արդեն երեք օր է՝ առողջարանում է:

«Հիմա իմ տրամադրությունը շատ-շատ վատ է: Նստած եմ սանատորիայում, ուր մտա երեք օր առաջ: Ինձ զգում եմ ինչպես բանտում, թերևս ավելի վատ: Ծանր է ու տհաճ...»²:

Բայց նույն օրը ուղարկված երկու այլ՝ Ցուլակ Խանգադյանին և Նվարդ Թումանյանին գրված նամակներում Վ. Տերյանը նշում է, որ արդեն չորս օր է, ինչ առողջարանում է:

Նույն թվականի մարտի 17-ին ուղարկված նամակներից մեկում Վ. Տերյանը գրում է, որ մի քանի օրից մեկնելու է Թիֆլիս, իսկ նույն օրը Հովհ. Թումանյանին ուղարկված հեռագրում գրում է:

«Խոնարհաբար խնդրում եմ գրողների նախագահին, Թիֆլիսի պետական իշխանությունների միջոցով շտապ դիմել տեղիս իշխանություններին, որպեսզի ինձ պաշտպանեն բժիշկ Ծուլցի և սանատորիայի տնօրենի ծանակումներից: Այստեղ ոչ ոքի չճանաչելով, հիվանդ, ես անգործ եմ»³:

Սուխումիից ուղարկված վերջին նամակը թվագրված է մարտի 30-ով, հետևաբար, Վ. Տերյանը առողջարանում մնացել է առնվազն երկու ամիս:

Ինքը՝ Տերյանը, իր գրածը համարել է հայտարարություն:

«Мы, туберкулезные больные живучие в "санатории" Кошко считаемъ своимъ нравственнымъ долгомъ для предупрежденія больныхъ идущихъ въ Сухумъ сделать следующее заявленіе. Обманутые широковищательными брошюрами рассылаемыми администраціей "санаторіи" по всей Россіи мы, прѣхавши изъ отдаленнѣйшихъ мѣстъ и имевъ неосторожность или несчастье поступить въ такъ называемую "санаторію" Кошко сделались объектомъ самой беззащитной эксплуатаціи и издевательства со стороны содержательницы

¹ Ալիսանյան Ս., Վահան Տերյանի պետական գործունեությունը, Եր., 1956, էջ 43:

² Տերյան Վ., Երկերի ժողովածու, հ. 4, Եր., 1979, էջ 305:

³ Նույն տեղում, էջ 309:

разрекламированной "санатории" Г-жи Кошко, которую, какъ это ни странно при конфликтахъ съ больными, всемерно и усерднѣе поддерживаетъ служащій въ "санаторіи" врачъ г. Шульдъ»¹.

Ապա Վ. Տերյանը նկարագրում է, թե իրականում ինչ է առողջարանում կազդուրվող հիվանդների դժգոհության պատճառը. սնունդը թեև բավականին թանկ է, այդուհանդերձ, անորակ է ու քիչ և ոչ միայն չի համապատասխանում «առողջարանում» փակցված կերակրացանկին, այլև նույնիսկ հանգստյան տան պահանջներին: Վատ սննդից գրեթե առանց բացառության բոլոր հիվանդները ստամոքսի խանգարում ունեն: Միակ ելքը քաղաքից հեռու և սարի վրա գտնվող առողջարանից քաղաք իջնելն է և այնտեղ լրացուցիչ սնվելը, սակայն դա կարող են իրենց թույլ տալ ոչ բոլորը, քանի որ վճարելով առողջարանի առանց այդ էլ բարձր վարձավճարը՝ հիվանդներից շատերը չեն էլ ենթադրել, որ ստիպված են լինելու լրացուցիչ գումարներ ծախսել:

«Однако не всѣ больные могутъ позволить себѣ такую роскошь такъ какъ многіе изъ нихъ поступивъ въ санаторію и платя достаточно высокую плату разчитываютъ получать за нее все необходимое и не имеютъ возможности тратить такую же сумму на "дополнительное питаніе", а другіе по состоянію своего здоровья лишены возможности не только ходить въ городъ, но и встать съ постели и всѣ они принуждену голодать. Между тѣмъ всѣмъ известно хорошо какое первенствующее значеніе имѣетъ питаніе при туберкулезѣ»²:

¹ ԳԱԹ, Վահան Տերյանի ֆոնդ, N 107:

«Մենք՝ Կոչկոյի «առողջարանում» բնակվող թոքախտով հիվանդներս, մեր բարոյական պարտքն ենք համարում հետևյալ հայտարարությամբ նախազգուշացնել Սոփոում եկող հիվանդներին: Մենք, «առողջարանի» տնօրենության կողմից ամբողջ Ռուսաստանով տարածված մեծախոստում բրոշյուրներով խաբավածներս, որ եկել ենք տարբեր կողմերից և պատահաբար կամ դժբախտաբար ընդունվել ենք Կոչկոյի այսպես կոչված «առողջարան», դարձել ենք լկտի շահագործման և ծաղրանքի թիրախ՝ գովազդված «առողջարանի» սեփականատեր տիկին Կոչկոյի կողմից, ում, որքան էլ տարօրինակ լինի, հիվանդների հետ վեճերի ժամանակ ամեն կերպ և ջանասիրաբար աջակցում է «առողջարանի» բժիշկ պարոն Շոյցը»:

² Նույն տեղում:

«Սակայն ոչ բոլոր հիվանդները կարող են իրենց թույլ տալ մնալ ծովափույում, քանի որ նրանցից շատերը, գալով «առողջարան» և վճարելով բավականին խոշոր գումար, ենթադրել են, որ դրա դիմաց ստանալու են այն, ինչ անհրաժեշտ է, և չուեն հնարավորություն նույնքան գումար վճարելու «լրացուցիչ սննդի» համար, իսկ ուրիշներն էլ, առողջական վիճակով պայմանավորված, չեն կարողանում ոչ միայն քաղաք գնալ, այլև վեր կենալ մահճակալից. և նրանք բոլորը մատնված են սովահարության: Մինչդեռ բոլորին քաջ հայտնի է, թե ինչ առաջնային նշանակություն ունի սնունդը թոքախտի ժամանակ»:

Ապա Վ. Տերյանն անդրադառնում է առողջարանի մաքրության խնդրին. ըստ պոետի՝ առողջարանում այնպիսի իրավիճակ է տիրում, որն անընդունելի է ոչ թե հատուկ բուժում նախատեսող հաստատության համար, այլ նույնիսկ քիչ թե շատ ընդունելի կեցավայրի համար: Մաքրության պակասից ողջ առողջարանը լի է ծանր օդով: Իսկ բոլոր դժգոհություններն արժանանում են նույն պատասխանին.

«Все частные заявления отдельных больных о невыносимых условиях "санаторской" жизни встречали одинъ и тотъ же издевательскій и краткій ответъ: "не нравится — уходите!" И этотъ ответъ даетъ больнымъ не только содержательница "санаторіи" весь интересъ которой направленъ исключительно къ наживке, но и врачъ г. Шульцъ, который казалось-бы долженъ былъ защищать интересы больныхъ а не жадной до наживке содержательницы "санаторіи"»¹:

Սակայն եթե առողջարանի սեփականատեր Կոշկոյի՝ որպես վատ գործարարի պահվածքը կարելի է հասկանալ, ապա բժշկի՝ Ծուլցի պահվածքը Վ. Տերյանը վրդովեցուցիչ է գնահատում՝ համարելով դա բժշկական և հասարակական էթիկայի տարրական կանոնների խախտում:

«Всякому ясно, что заявлєніе — "не нравится уходите" явно разсчитано на безпомощность больныхъ, которымъ некуда дѣться, такъ какъ вслѣдствіе болѣзни въ гостиницѣ жить они не могутъ а выѣхать изъ Сухума имъ опасно и какъ известно не такъ-то легко при нынѣшнихъ условіяхъ. Содержательница "санаторіи" г-жа Кошко при протестахъ больныхъ часто ссыалась на отсутствіе въ городѣ продуктовъ, однако недавно, когда нѣсколько дней къ столу не подавали ничего ни утромъ ни вечеромъ, больные провѣрили и оказалось, что продукты въ городѣ имѣются и тогда было сдѣлано г-жѣ

¹ Նույն տեղում:

«Պարզ է, որ «դուր չի գալիս» գնացք»-ը ակնհայտորեն հաշվարկված է հիվանդների անօգնականությամբ, որոնք գնալու տեղ չունեն, քանի որ հիվանդության պատճառով չեն կարող հյուրանոցում ապրել, իսկ Սովնումից դուրս գալը վտանգավոր է, և ինչպես հայտնի է, ոչ այնքան հեշտ՝ տվյալ պայմաններում: «Առողջարանի» տնօրեն տիկին Կոշկոն հիվանդների բողոքների ժամանակ հաճախ արդարանում էր քաղաքում մթերքների բացակայությամբ, սակայն վերջերս, երբ մի քանի օր ոչինչ չէին մատուցում, ոչ առավոտյան, ոչ երեկոյան, հիվանդները ստուգեցին, և պարզվեց, որ քաղաքում մթերքներ կան, և այդ ժամանակ տիկին Կոշկոյին կոկեկտիվ հայտարարություն արվեց, սակայն բողոքներին հետևեց միևնույն պատասխանը. «Դուր չի գալիս» գնացք»:

Кошко коллективное заявление но на протесты послъдовалъ все тотъ-же ответъ — не нравится моля уходите»¹:

Ապա Վ. Տերյանը գրում է, որ այդ վերջին իրադարձությունից հետո Կոշկոն և Ծուցը երկու հիվանդների՝ առողջարանը լքելու վերաբերյալ վերջնաժամկետ են ներկայացնում՝ կասկածելով վերջիններիս հիվանդների միասնական բողոքը կազմակերպելու մեջ: Անմիջապես չհեռանալու դեպքում երկուսին սպառնում են, որ նրանց այլևս սնունդ չեն տալու, իսկ իրերը նետելու են սենյակից դուրս: Կարելի է ենթադրել, որ կազմակերպիչներից մեկը հենց Վահան Տերյանն է եղել:

«Это ли не приемъ достойный времянь Николая и его приспѣшниковъ! Возмущенные эксплуататорскими инстинктами г-жи Кошко и фельдфебельскимъ самоуправствомъ г. Шульца, мы больные, публично протестуемъ противъ ихъ поведенія и обращаемъ вниманіе властей и общества на безобразія царящія въ заведеніи госпожи Кошко, почему-то именуемой санаторіей»²:

Այս դեպքի մանրամասները հայտնի չեն: Թերևս հենց հետագա շահարկումների համար ո՛չ ժամանակակիցների հուշերում, ո՛չ այլ նյութերում չկան մանրամասնություններ: Վ. Պարտիզունու «Տերյանի կենսապատումը» գրքում առանց որևէ հղման մեջ է բերվում ոմն Լիպշիցի պատասխան հեռագիրը Հովհաննես Թումանյանին. «Տերյանի հարաբերությունները կարգավորվում են: Լիբշից»: Կարելի է ենթադրել, որ Վահան Տերյանի հեռագրին ի պատասխան՝ Հովհաննես Թումանյանը կապ է հաստատել Սուխումիի իշխանությունների հետ, որոնք էլ միջամտել են գնալով թեժացող կոնֆլիկտին, սակայն այլ մանրամասների մասին պատմությունը լռում է:

¹ Նույն տեղում:

«Արդյո՞ք սա Նիկոլային և նրա կողմնակիցներին բնորոշ ընդունելություն չէ: Տիկին Կոշկոյի շահագործական բնագղներից և պարոն Ծուցի ֆելդֆերբյան կամայականությունից վրդովված՝ մենք՝ հիվանդներս, հրապարակավ բողոքում ենք նրանց պահվածքի դեմ և իշխանությունների ու հասարակության ուշադրությունը հրավիրում ենք տիկին Կոշկոյի՝ չգիտես ինչու «առողջարան» կոչվող հաստատությունում տիրող այլանդակության վրա»:

² Պարտիզունի Վ., Տերյանի կենսապատումը, եր., 1984, էջ 302: